## ԱՌԱԿ.

—

### ԿԱՐԱՊ, ՁՈՒԿ ԵՒ ԽԵՉԱՓԱՌ.

*Երբ ընկերաց մէջ միութիւն չըկայ*
*Ոչ երբէք նոցա գործն աջող կերթայ.*
*Գործ ալ մի կոչեր դու զայն աշխատանք,*
*Այլ անտանելի վիշտ ու չարչարանք։*

*Օր մը Կարապը, Ձուկն ու Խեչափառ, —*
*Չեմ գիտեր ուսկից ալ գըտան զիրար, —*
*Բեռնաբարձ սայլ մը տանիլ կուզէին.*
*Երեքը մէկէն լըծուեցան սայլին.*
*Երեքն ալ արիւն քըրտինք կըմըտնեն,*
*Սակայն չըշարժիր սայլը իւր տեղէն։*
*«Զարմանք, կըսէին նոքա մէկմէկու.*
*Չեմք գիտեր ինչու*
*Այս սայլը առաջ տանիլ չեմք կըրնար.*
*Ոչ բեռը ծանր է, ոչ ճամբան դըժար»։*
*Հապա չէս ըսեր.*
*Կարապը վեր կըքաշէր,*
*Խեչափառը ետ ետ,*
*Իսկ ձուկը դէպ ի գետ։*

*Ծուռը ո՞րն էր, կամ թէ ո՞ւմն էր իրաւունք,*
*Այն թողունք.*
*Բանն այս է որ*
*Մինչեւ ցայսօր*
*Սայլը հոն է բեռովը. —*
*Այնպէս կըսէ Կռիլովը։*

ՔՈՒԼՈԳ.